157

1. Տե՛ր իմ, Դու ինձ նոր սիրտ ես պարգևել
Եվ Քո մեծ սիրով վերքերս բուժել,
Քեզ հավիտյան պետք է փառաբանեմ
Եվ միայն Քեզ ես միշտ հույսով նայեմ:

Իմ հույսը (3), Տե՛ր, Դու ես:
Իմ հույսը, փափագը
Եվ սերը Հիսուսն է:

2. Ի՜նչ լավ է, որ Դու աշխարհ ես եկել,
Քեզ եմ ուզում ես սիրտս նվիրել,
Քեզ եմ հանձնում ես բոլոր հոգսերս,
Քեզ եմ վստահում իմ գաղտնիքները:

3. Թե իմ ճանապարհը դժվար լինի,
Եվ փշեր, ոչ թե վարդեր հանդիպեն,
Բայց Քեզ մոտ եմ գալու ամեն դեպքում,
Ինչքան էլ դժվար լինի այս կյանքում:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025